Այսօր մեր հայրենիքը կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև. արտաքին ծանր սպառնալիքները զուգակցվում են ազգային արժեքների և ինքնության ընկալումների խեղմամբ, ներքին պառակտվածությամբ, որ ավելի է խորանում անհանդուրժողականության ու ատելության սերմանումով

Գարեգին Բ, Ամենայն հայոց կաթողիկոս

Հորեքշաբթի
22 հոկտեմբերի 2025թ.
№ 17 (647)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
9 771829 346006 25017 >

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ԱՊՀ ղեկավարների խորհրդի նիստի որոշմամբ՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքը ճանաչվել է 2026 թվականի երիտասարդական մայրաքաղաք:

Համաձայն «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» միջազգային ծրագրի կարգի՝ Կապանում 2026 թվականին նախատեսվում է իրականացնել լայնամասշտաբ ծրագրեր: Մասնավորապես՝

- «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի բացում,
- ԱՊՀ երիտասարդական ֆորում,
- ԱՊՀ երիտասարդական ճամբարներ, դասընթացներ, կլոր սեղաններ,
- երիտասարդներին ուղղված ծրագրերի վերաբերյալ Կապան քաղաքի հնարավորությունների ներկայացում,
- ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդի նիստ,
- «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի փակում:

Որոշվել է մեկտեղել «ԱՊՀ 2026 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի և 2026 թ. Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք ծրագրի համար նախատեսված ֆինանսական ու մարդկային ռեսուրսները՝ տեղական, հանրապետական և տարածաշրջանային առումով էականորեն մեծացնելով Կապանի՝ որպես ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաքի տեսանելիության բարձրացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը:

Կապանը՝ ԱՊՀ երկրների 2026 թ. երիտասարդական մայրաքաղաք

Բահրամ Թահերի. «Չենք հանդուրժի մեր սահմանների մոտ արտատարածաշրջանային ուժերի ներկայությունը»

Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Կապանում ԻԻՀ հյուպատոսության հիմնադրման երրորդ տարեդարձին: Հանդիության ժամանակ ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետությունուն Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի ժամանակավոր հավատարմատար Բահրամ Թահերին: Ելույթի տեքստը՝ ստորև:

Յանուն բարեգութ և ողորմած Աստծո

Ուրախ եմ, որ կրկին հնարավորություն ընձեռվեց այցելել Սյունիքի մարզ և Կապան քաղաք: Մեծ պատիվ է ձեր գեղեցիկ քաղաքի ղեկավարության և բնակչության հետ ներկա գտնվել այս միջոցառմանը:

Անկեղծորեն շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսությանն արժանի աջակցություն ցույց տալու և համագործակցության համար: Անկասկած, այդ աջակցությունը շատ արդյունավետ դեր է խաղում երկու երկրի միջև հարաբերությունների զարգացման գործում:

Շնորհավորում եմ իմ հարգելի և եռանդուն գործընկեր՝ գլխավոր հյուպատոս պարոն Աբեդին Վարամինին և ներկայացուցչության գործընկերներին՝ գլխավոր հյուպատոսության հիմնադրման 3-րդ տարեդարձի կապակցությամբ:

Դուք գիտեք՝ Իրանի և Հայաստանի միջև հարաբերություններն ավելի քան երկու հազարամյա պատմական վաղեմություն ունեն: Պատմությունը հստակորեն վկայում է, որ Իրանն ու Հայաստանը երբեք միմյանց համար անվտանգության սպառնալիք չեն եղել և չեն լինի: Մենք միշտ ականատես ենք եղել Իրանի և Հայաստանի միջև բարիդրացիական հարաբերություններով օժտված համակեցությանը: Ընդհանուր պատմությունը երկու ժողովուրդների միջև մշակութային կապ է ստեղծել, որը համարվում է առանձնակի արժեք :

Պատմության տարբեր ժամանակաշրջաններում մեր ժողովուրդները կողք-կողքի են եղել թե ուրախության և թե տխրության պահերին: Այս ընդհանուր և հավաքական

Շարունակությունը՝ էջ 3

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ Զարմանալի թեթև, զարմանալի անդեմ՝ Մերկության պես տկլոր ու անանցյալ...

Եղիշե Չարենց

Շարունակվում է ԼՂ-ից բռնի տեղահանվածների բնակարանային ապահովման առցանց դիմումների ընդունումը

Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում առցանց դիմումների ընդունման գործընթացը շարունակվում է:

Ծրագրի շրջանակում այս պահի դրությամբ հավաստագիր է ստացել 3020 ընտանիք, որից 1044-ն արդեն իրացրել են հավաստագիրը: Այդ մասին տեղեկացնում են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից:

«Միջոցառումն իրականացվում է աջակցության հետևյալ եղանակներից որևէ մեկի ձևով՝

- բնակարանի (կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի) կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում.
- անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում,
- գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն:

Ծրագրի շրջանակում աջակցությունը տրվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի՝ 3-5 մլն դրամի շրջանակում:

* * *

2025-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանից մեկնել է 44,566 բռնի տեղահանված արցախցի, վերադարձել՝ 28,785-ը: Այսինքն՝ 2023-ի սեպտեմբերյան բռնի տեղահանությունից հետո մինչև 2025-ի հոկտեմբերի 1-ը Հայաստանից հեռացել և (դեռ) չի վերադարձել 15,781 արցախցի:

Նախորդ ամսվա տվյալներով չվերադարձածների թիվը կազմել էր 15,955, այսինքն՝ ներգաղթողների թիվը վերջին ամսում ավելացել է 174-ով: Տվյալները Սիվիլնեթին տրամադրել է Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ):

2024-ի գարնանից մինչև 2025-ի գարուն (մոտ մեկ տարի) չվերադարձողների թիվը պահպանվել է 11-12 հազարի սահմաններում: Սակայն 2025-ի մայիսից սկսվեց նոր ալիք. չվերադարձողների թիվն ավելացավ շուրջ 4-5 հազարով: Դա համընկավ այն ժամանակահատվածի հետ, երբ դադարեցվեց արցախցիների «40+10» հազար դրամ սոցիալական ծրագիրը, և աջակցությունը դարձավ թիրախային՝ միայն խոցելի խմբերին:

2023-ի դեկտեմբերից մինչև 2025-ի հոկտեմբեր միջին հաշվով ամեն ամիս Հայաստանից հեռանում և չի վերադառնում մոտ 457 արցախցի:

Ի պատասխան Zarkerak.am-ի հարցման՝ ներքին գործերի նախարարությունը հայտնել է, որ սեպտեմբերի 18-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 17,612 անձ դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու նպատակով, որոնցից 12,064-ը արդեն ստացել է քաղաքացիություն:

//

Կանադական ընկերությունը պատրաստ է մինչև 5 մլրդ դոլար ներդնել Հայաստանում պղնձի և մոլիբդենի արդյունահանման համար

Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ Վարդան Ջհանյանը հաջողված է համարում Ծաղկաձորում հոկտեմբերի 4-ին ավարտված Mining Armenia Forum 2025 (MAF25) միջազգային համաժողովը, որը միտված էր Հայաստանի հանքարդյունաբերական ներուժի բացահայտմանը:

Այս մասին նա նշեց «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում՝ ազդարարելով նաև Հայաստանում պղնձի և մոլիբդենի արդյունահանման վերաբերյալ կանադական ընկերություններից մեկի հետաքրքրվածության մասին: Այդ ընկերությունը պատրաստ է մինչև 5 մլրդ դոլար ներդնել, եթե հետախուզական աշխատանքները հաստատեն տվյալ վայրում բավարար պաշարների առկայությունը և արդյունահանման տնտեսական նպատակահարմարությունը:

Նման համաժողովները Վարդան Ջհանյանը կարևորում է նախևառաջ հանքարդյունաբերության ոլորտում դրական տեղաշարժին նպաստելու առումով: Նա ընդգծեց, որ միջոցառման ընթացքում բարձրաձայնվեցին ոլորտի հիմնական խնդիրները և մարտահրավերները, ուրվագծվեցին զարգացման հեռանկարները:

«Ֆորումը ծառայեց հիմնական նպատակին՝ նպաստել ոլորտի, դրանով իսկ՝ Հայաստանի տնտեսության զարգացմանը: Դատելով գործարար համայնքի և կառավարության ներկայացուցիչների հնչեցրած մոտեցումներից և տրամադրվածությունից՝ զարգացման միտումներն արդեն իսկ նկատելի են: Հուսով ենք, որ համաժողովը կդառնա ավանդական և ամենամյա»,– նշեց մեր զրուցակիցը:

Վարդան Ջհանյանը կարևոր է համարում նաև համաժողովի ընթացքում ծավալված բաց և անկեղծ երկխոսությունը ամենատարբեր հարցերի շուրջ:

«Փորձել ենք բազմակողմանիորեն անդրադառնալ մեր ոլորտին, որն ունի տարբեր խնդիրներ: Առաջնային է հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական նշանակությունը և, իհարկե, կարևոր է լուծել առկա խնդիրները, այդ թվում նրանք, որոնք առնչվում են կայուն զարգացմանը: Կայուն զարգացումն էլ իր հերթին ներառում է տարբեր բաղադրիչներ՝ սոցիալական, համայնքների վրա ազդեցության, բնապահպանական և այլ խնդիրներ»,– ասաց Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահը:

Պատասխանելով ոլորտում օտարերկրյա ներդրումների ընդլայնման վերաբերյալ մեր հարցին՝ Վարդան Ջհանյանը նշեց, որ 2018 թվականին Ամուլսարի հանքավայրի փակվելուց հետո զգացողություն կա, որ նվազել է օտարերկրյա խոշոր ներդրողների վստահությունը Հայաստանի նկատմամբ:

«Ֆորումին արտասահմանցի մասնագետներին հրավիրելը պայմանավորված է նաև այդ կասկածները փարատելու մղումով: Այս տարի մասնակիցների թվում էին կանադական «Հայասա» կազմակերպության ներկայացուցիչները: Ընկերությունը մասնագիտացած է հանքարդյունաբերական հետախուզական աշխատանքներում ներդրումներ կատարելու ոլորտում: Նրանք պատրաստվում են մեծ ներդրումներ կատարել Հայաստանում: Նույնիսկ նշեցին, որ հնարավորություն ունեն 2030-ական թվականներին մինչև 5 մլրդ դոլարի ներդրում կատարել, եթե հետախուզման աշխատանքները հաստատեն պաշարների ակնկալվող ծավալի առկայությունը: Խոսքը պղնձի և մոլիբդենի արդյունահանման մասին է: Այսինքն, կա ներդրումների ներգրավման հնարավորություն, ներդրողներ էլ կան, բայց պետք է վերականգնենք նրանց վստահությունը դեպի մեր տնտեսությունը, դեպի Հայաստանում գործող ինստիտուտները»,– եզրափակեց նա:

Mining Armenia Forum-ն այս տարի անցկացվեց «Հանքարդյունաբերություն և էներգիա. միջազգային միտումները և Հայաստանի ներուժը» խորագրի ներքո: Մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Երկօրյա համաժողովը մեկ հարթակում միավորել էր պետական կառույցների, մասնագիտական հանրույթի, մասնավոր հատվածի և ներդրումային ընկերությունների ավելի քան 250 ներկայացուցչի: Պանելային քննարկումների, առաջատար ելույթների, հարցազրույցների ձևաչափով անցկացվող համաժողովին մասնակցում էին առաջատար խոսնակներ Հայաստանից, Կանադայից, Նիդերլանդներից, Ղազախստանից, Ռուսաստանից, Միացյալ Նահանգներից, Բելառուսից, Արաբական Միացյալ Էմիրություններից:

Քննարկման հիմնական թեմաներն էին՝ հանքարդյունաբերությունը՝ որպես նոր էներգիա. ներդրումային հնարավորությունները և գլոբալ տնտեսական միտումները, Հայաստանի հանքարդյունաբերությունն այսօր և ապագայի հեռանկարները, հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացումն ու հասարակական միտումները, ինչպես նաև կայուն զարգացումը՝ որպես տեխնոլոգիական զարգացման արդյունք, տեխնոլոգիաների դերը հանքարդյունաբերությունում և դրա սահմաններից դուրս, ինչպես նաև ոլորտին առնչվող այլ թեմաներ:

Համաժողովի ավարտին տեղի ունեցավ 2024 թվականին հանքարդյունաբերության վերաբերյալ լավագույն լրագրողական անդրադարձների հեղինակների պարգևատրման արարողությունը: Լավագույնները որոշվել էին Հայաստանի տնտեսական լրագրողների ասոցիացիայի հայտարարած մրցույթի արդյունքներով:

04.10.2025

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ներկայացրել է կայուն զարգացման հաշվետվությունը

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ) պաշտոնապես ներկայացրել է իր 2024 թվականի կայուն զարգացման հաշվետվությունը՝ հոկտեմբերի 3-4-ը անցկացվող «Հայաստանի Հանքարդյունաբերության Ֆորումի» ընթացքում՝ վերահաստատելով նվիրվածությունը թափանցիկությանն ու կայուն զարգացմանը: Սա ԶՊՄԿ-ի կողմից հրապարակվող չորրորդ անընդմեջ հաշվետվությունն է՝ դարձնելով ընկերությունը Հայաստանում միակը, որը հետևողականորեն իրականացնում է ԲՍԿ հաշվետվությունը:

Այս տարվա հաշվետվությունը կազմվել է համահունչ միջազգային առաջատար չափորոշիչներին (ներառյալ՝ GRI, SASB և TCFD): ԶՊՄԿ-ն այս տարի առաջին անգամ հողում ունի նաև Բնության հետ կապված Ֆինանսական Բացահայտումների աշխատանքային խմբին (TNFD) և պարտավորվել է լիարժեքորեն ներառել այս շրջանակը իր հաջորդ հաշվետվության մեջ:

Զեկույցի ներկայացումը ուղեկցվել է խորքային քննարկմամբ՝ նվիրված կայուն զարգացման հաշվետվողականության թեմային, որի մասնակիցներն էին KPMG, Grant Thornton Հայաստանի, Հայաստանում Համաշխարհային բանկի գրասենյակի և ԶՊՄԿ ներկայացուցիչները: Քննարկման ընթացքում քննարկվեցին ԲՍԿ ստանդարտների աճող դերը և հուսալի տվյալների կարևորությունը պատասխանատու հանքարդյունաբերության մեջ:

2024 թ. հաշվետվությունը կանցնի անկախ երրորդ կողմի կողմից իրականացվող աուդիտ, ինչը միտված է ավելացնել հաշվետվողականությունն ու շահագրգիռ կողմերի վստահությունը: Աուդիտն իրականացնում է Grant Thornton ընկերությունը:

Զեկույցի նախաբանում ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին ասել է. **«Մեզ համար կայուն զարգացումը միայն որոշակի նախանշված նպատակների հասնելու միջոց չէ, այլ բիզնես մոդել է, որը նպաստում է արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի կատարելագործմանը, ընկերության ամրապնդմանը և շահագրգիռ կողմերի հետ երկարաժամկետ համագործակցության ապահովմանը: Այս սկզբունքները պարզապես ձգտումներ չեն, դրանք հիմնված են գործնականում իրականացվող հստակ նախաձեռնությունների վրա»:**

ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանն իր խոսքում ընդգծել է. «Որպես ԶՊՄԿ Կայուն զարգացման գծով տնօրեն, ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր հերթական՝ թվով չորրորդ Կայուն զարգացման հաշվետվությունը 2024 հաշվետու տարվա համար: Այս հաշվետվությունը ներառում է ինչպես մեր նվաճումները, այնպես էլ բացթողումները՝ կայուն զարգացման մեր հավակնոտ նպատակներին հասնելու ճանապարհին: Ինչպես այս դժվար ուղու նախորդ տարիներին, 2024թ-ին ևս եղան հպարտության և հիասթափության առիթներ: Հաշվետվությունում ամփոփված են մի շարք կարևոր փաստեր, որոնք, իմ համոզմամբ, մանրամասն, ամբողջովին և անաչառորեն նկարագրում են մեր ուղին դեպի կայուն զարգացում»:

Հաշվետվության ամբողջական տարբերակը հասանելի է այստեղ: https://www.zcmc.am/esg/reports/:

06.10.2025

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսությունը երեք տարեկան է

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսարանում հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ երեկո՝ նվիրված դիվանագիտական այդ կառույցի հիմնադրման 3-րդ տարեդարձին:

Հյուպատոսարանի եռամյա գործունեության վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ հյուպատոսի գրասենյակի վարիչ-թարգմանիչ Շեռլի Ավետյանը՝ անդրադառնալով մշակութային, կրթական, զբոսաշրջային, մարզական ոլորտներում երկու երկրների միջև համագործակցությանը, անցկացված միջոցառումներին:

Առավել ընդգրկուն խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի ժամանակավոր հավատարմատար Բահրամ Թահերին՝ պատմական անդրադարձ կատարելով երկու երկրների բարեկամությանը, հիմնական շեշտը դնելով մեր ժամանակներում ստեղծված իրողությունների վրա: Նա մասնավորապես նշեց, որ Իրանն ունի սկզբունքային դիրքորոշում, այն է՝ տարածաշրջանային խնդիրները պետք է լուծվեն տարածաշրջանի երկրների միջոցով և տարածաշրջանային ձևաչափերում՝ առանց արտաքին միջամտության: Հավելեց նաև, որ աշխարհագրական սահմանների ցանկացած փոփոխություն Իրանի Իսլամական Հանրապետության համար անընդունելի է: Եվ իրենք չեն հանդուրժի Հայաստանի ու Իրանի սահմանների մոտ արտատարածաշրջանային ուժերի ներկայությունն ու երբեք թույլ չեն տա, որ արտաքին խաղացողները ստվեր գցեն երկու երկրների ընդհանուր շահերի վրա:

Օրվա խորհրդին պատշաճող խոսք հնչեցրին Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին և ուրիշներ:

Մորթեզա Աբեդին Վարամին ԻԻՀ գլխավոր հյուպատոսարանի շնորհակալագրեր հանձնեց Սյունիքի մարզի տարբեր ոլորտների ներկայացուցիչների:

Երեկոյին մասնակցում էին նաև տարածքային իշխանության ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ:

Երաժշտական կատարումներով հանդես եկան Կապանի արվեստի պետական քոլեջի սաները:

Վերջում մտքերի փոխանակությունը շարունակվեց աղանդերի սեղանի շուրջ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բահրամ Թահերի. «Չենք հանդուրժի մեր սահմանների մոտ արտատարածաշրջանային ուժերի ներկայությունը»

Սկիզբը՝ էջ 1

հիշողությունները երկու ժողովրդի մտքերում ու պատմական հիշողության մեջ դրական պատկեր են ստեղծել, որը երբեք չի կարող ջնջվել:

Հայաստանի անկախացումից ի վեր՝ բոլոր ոլորտներում և մաշտաբներով, երկու երկրի միջև հարաբերությունների ընդլայնմանն ականատես ենք եղել:

Քաղաքական ոլորտում հաճախակի փոխադարձ այցեր են իրականացվել տարբեր մակարդակներում: Այս տարվա օգոստոսին ԻԻՀ նախագահ Ն.Գ. դոկտոր Փեզեշքիանի այցը Հայաստան բեկումնային էր երկու երկրի հարաբերություններում:

Բարեբախտաբար Իրանի և Հայաստանի միջև հարաբերություններն այնքան ամուր են, որ թույլ չեն տալիս երրորդ կողմերին նույնիսկ չնչին թյուրըմբռնում առաջացնել կողմերի միջև: Հարաբերությունների գնացքը շարժվում է ճիշտ ուղեգծով, և ոչ մի ուժ չի կարող այն շեղել իր ուղուց:

Առևտրի ոլորտում ականատես ենք երկու երկրի միջև ծավալների աճի: Կանխատեսումները ցույց են տալիս, որ այս տարի առևտրի ծավալը կգերազանցի 900 միլիոն դոլարը: Հաշվի առնելով երկու երկրի ղեկավարների կողմից սահմանված ռազմավարությունը՝ առևտրի ծավալների մասին, անհրաժեշտ է, որ այդ նպատակին հասնելու համար ապահովված լինեն համապատասխան ենթակառուցվածքներով: Արաքս գետի վրա առկա կամուրջը չի կարող սպասարկել նման ծավալի բեռնափոխադրումները: Շարունակական ջանքերի շնորհիվ, կանխատեսվում է, մոտ ապագայում կմեկնարկեն Արաքս գետի վրա կառուցվող երկրորդ կամրջի շինարարական աշխատանքները:

Իրանական ընկերությունների կողմից Հայաստանում իրականացվող տեխնիկական և ինժեներական նախագծերի ծավալը մոտենում է 700 միլիոն դոլարի:

Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի՝ Ագարակ-Քաջարան 32 կիլոմետրանոց հատվածն արագ տեմպերով կառուցվում է: Բարեբախտաբար Քաջարանի թունելի կառուցման մրցույթը նույնպես ընթացքի մեջ է: Այս նախագծերի ավարտի շնորհիվ, անկասկած, երկու երկրի և նույնիսկ Եվրասիական միության

անդամ պետությունների միջև ցամաքային բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ոլորտում հիմնարար փոփոխություն կարձանագրվի:

Երկու երկրի միջև երրորդ էլեկտրահաղորդման գծի շինարարական աշխատանքները, որ տարիներ շարունակ թղթի վրա էին մնացել, վերջին մեկ-երկու տարվա ընթացքում արագ տեմպերով են իրականացվել, և այս պահի դրությամբ ավելի քան 92% ֆիզիկական առաջընթաց է արձանագրվել: Նախատեսվում է, որ նախագիծը շահագործման կհանձնվի մոտ ապագայում:

Բարեբախտաբար երկու երկրի միջև մշակույթի, արվեստի, գիտության և կրթական ոլորտներում փոխգործակցությունն արագորեն է զարգանում: Այս կարճ ժամանակահատվածում ձեռնարկված բոլոր քայլերի մասին խոսել հնարավոր չէ: Ես կնշեմ միայն երկու կարևոր միջոցառման մասին՝ Նավասարդի փառատոնը, մյուսը՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ելույթը Պերսեպոլիսում:

Նման ծրագրերը միայն գեղարվեստական միջոցառումներ չեն, այլ մշակութային իրադարձություններ, որոնք կրում են բազմաշերտ խորհրդանշական ուղերձներ: Ներկայացնում են արևելյան երկու մեծ ժառանգության միջև կապը: Ցույց են տալիս, որ արվեստն ու երաժշտությունը մշակույթների և քաղաքակրթությունների ընդհանուր լեզուն են: Կամուրջ են ժողովրդների միջև, որը թարգմանության կարիք չունի: Կրում են խաղաղության, բարեկամության, փոխգործակցության և փոխադարձ հարգանքի ուղերձ:

Հարավային Կովկասում տեղի ունեցող զարգացումների կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում ևս մեկ անգամ հիշեցնել իմ երկրի դիրքորոշումների ու մոտեցումների մասին:

Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ աջակցել է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև իրական ու հարատև խաղաղության հաստատմանը: Մենք բազմիցս հայտարարել ենք՝ պատրաստ ենք օգնել Հարավային Կովկասում խաղաղության և կայունության հաստատմանը՝ երկկողմ հարաբերությունների շրջանակում կամ տարածաշրջանային ձևաչափերով:

Մեր սկզբունքային դիրքորոշումն է՝ տարածաշրջանային խնդիրները պետք է լուծվեն տարածաշրջանի երկրների միջոցով և տարածաշրջանային ձևաչափերում՝ առանց արտաքին միջամտության:

Մենք բացահայտ բարձրաձայնել ենք մեր կարմիր գծերի մասին: Հստակորեն հայտնել ենք՝ աշխարհագրական սահմանների ցանկացած փոփոխություն մեզ համար անընդունելի է:

Աջակցում ենք տարածաշրջանի երկրների, մասնավորապես Հայաստանի անկախությանը և տարածքային ամբողջականությանը: Չենք հանդուրժի մեր սահմանների մոտ արտատարածաշրջանային ուժերի ներկայությունը:

Չենք հանդուրժի մեր սահմանների մոտ արտատարածաշրջանային ուժերի ներկայությունը:

Երբեք թույլ չենք տա, որ արտաքին խաղացողները ստվեր գցեն մեր ընդհանուր շահերի վրա:

Խորապես համոզված ենք՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը լիովին ունակ են ապահովելու իրենց ընդհանուր սահմանների անվտանգությունը:

Սյունիքի մարզը Հայաստանի Հանրապետության անբաժանելի և անքակտելի մասն է: Այն եղել է և կլինի Հայաստանի վերահսկողության, ինքնիշխանության ներքո: Այս մարզն Իրանի Իսլամական Հանրապետության համար ունի առանցքային նշանակություն: Այս մարզն Իրանի դարպասն է դեպի Հայաստան ու նույնիսկ դեպի Եվրասիական տնտեսական միության մեծ շուկա, և հակառակը՝ այն Հայաստանի դարպասն է դեպի Իրան, հարավ և Հարավարևելյան Ասիա:

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսության հիմնումը սկզբունքորեն այս մոտեցումներն է հետապնդել:

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսության հիմնումը և Սյունիքի մարզի ազնիվ պաշտոնյաների ու բնակչության անգնահատելի համագործակցությունը շատ կարևոր դեր են խաղացել երկու երկրի միջև բոլոր առումներով հարաբերությունների զարգացման գործում:

Մենք աջակցում ենք Սյունիքի մարզի և Իրանի տարբեր նահանգների, մասնավորապես՝ Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող նահանգների միջև համագործակցության ընդլայնմանն ու զարգացմանը:

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 Թ.

Հա՞ց, թե՞ ազատություն

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԴԱԼՅԱՆ

Տագնապալի և, միևնույն ժամանակ, բազմաթիվ հարցեր առաջացնող ժամանակներում ենք ապրում: Վերջին տարիներին նախ՝ տարակուսանքով, հետո՝ զարմանքով, ապա՝ ապշելով, իսկ ներկայումս վրդովմունքով փաստում ենք, որ մեր հասարակության մի զգալի հատվածը կարող է կամ, ավելի վատ, ցանկանում է ապրել միայն մի սկզբունքով՝ հաց և կոմֆորտ: Մարդկանց գիտակցության մեջ հետին պլան են մղվել ազատությունը, հայրենասիրությունը, բարեպաշտությունն ու առաքինությունները, սեփական կարծիք ու սկզբունքներ ունենալը: Հայ մարդը «մի կտոր հացի» դիմաց սկսել է ուրանալ ամեն սրբություն և ազգային ինքնության յուրաքանչյուր հենասյուն՝ Արցախ, Արարատ, Հայոց մեծ եղեռն, Հայ Առաքելական եկեղեցի, և, ամենայն հավանականությամբ, այս շարքը դեռևս անավարտ է: Ինչու՞ է այդպես և արդյո՞ք այն, ինչ տեղի է ունենում, օրինաչափ է: Այս հարցերի պատասխանները սովորության համաձայն փորձեցի գտնել դասականների աշխատություններում՝ այս անգամ դիմելով մարդկային հոգու մեծագույն գիտակներից մեկին՝ ռուս մեծ գրող Ֆյոդոր Դոստոևսկուն:

«Կարամազով եղբայրներ» վեպում Դոստոևսկին ստեղծել է մարդկային բնությունը բացահայտող իր ամենահզոր աշխատություններից մեկը՝ «Մեծ ինկվիզիտորը»: Այս պատմության մեջ Քրիստոսը երկիր է վերադառնում մեծ ինկվիզիցայի տարիներին, և մարդիկ ճանաչելով Փրկչին՝ հետևում են Նրան: Սակայն Քրիստոսն անմիջապես ձերբակալվում է ինկվիզիցիայի կողմից: Գիշերը Նրա մոտ է գալիս գլխավոր ինկվիզիտորը և փորձում զրուցել Փրկչի հետ: Ծեր ինկվիզիտորը պնդում է, որ Քրիստոսի մեծագույն սխալն այն է, որ նա մարդկանց ազատություն է տվել, մինչդեռ մարդիկ չեն ցանկանում ազատ լինել: Նրանք ցանկանում են հաց և կանխատեսելի վաղվա օր, և եթե մարդուն դնեն ազատություն կամ «մի կտոր հաց» երկընտրանքի առաջ, ապա գրեթե միշտ մարդն ընտրում է «մի կտոր հացը»: Շատ կոշտ է հնչում այս միտքը, սակայն հենց դրանում է մեծ գրողը տեսնում մարդկային թուլության էությունը: Ազատությունը պահանջում է խիզախություն և պատասխանատվություն կրելու պատրաստակամություն, իսկ հացը խորհրդանշում է անվտանգություն, կոմֆորտ և կարիքների բավարարում: Ըստ գլխավոր ինկվիզիտորի՝ մարդկանց մեծամասնությունը հանուն կուշտ և ապահով լինելու նախընտրում է հրաժարվել ընտրություն կատարելու ծանր լծից: Նա տեղեկացնում է Քրիստոսին, որ իրենք ուղղում են Նրա սխալը՝ սահմանափակելով մարդկանց ազատությունը՝ փոխարենը տալով կանոններ, ծեսեր և նրանց համար հոգ տանելու խոստումներ: Իսկ մարդիկ երախտապարտ կլինեն, որովհետև ազատվել են ինքնուրույն որոշումներ ընդունելու տանջալից անհրաժեշտությունից: Դոստոևսկին ընդգծում է, որ ազատությունը ոչ միայն մեծ պարգև է, այլ նաև ծանր խաչ: Այդ իսկ պատճառով շատերը ոչ թե պարզապես վախենում են ազատությունից, հետևաբար, նաև սեփական որոշումների համար պատասխանատվություն կրելուց, այլև պատրաստ են գիտակցաբար հրաժարվել դրանից, եթե փոխարենը ստանան «կարգ ու կանոն» և գոյատևելու երաշխիքներ: Եվ հենց այդ հրաժարումի մեջ է թաքնված մարդկային ողբերգությունը: Հացի կտորի մեջ մարդը «խաղաղություն» գտնում, բայց կորցնում է սեփական արժանապատվությունը: Նա դադարում է իր կյանքի հեղինակը լինել և անխուսափելիորեն դառնում օտարի կամակատարը: Ծեր ինկվիզիտորը վստահ է, որ մարդիկ իրենք են ձգտում այս վիճակին և իրենց համար շատ ավելի հեշտ է ապրել իշխանության վերահսկողության ներքո, քան ազատության «անորոշության» մեջ: Դոստոևսկու այս ստեղծագործությունը վեր է հանում ազատության առջև ունեցած խորքային վախը, ինչի հետևանքով մարդն ընդունակ է մերժել ազատությունը «խաղաղության» դիմաց: Շատերն են համաձայնվում լինել կառավարելի, միայն թե ինչ-որ մեկն իր վրա վերցնի նրանց հետագա ճակատագրերի համար պատասխանատվությունը: Սա բացատրում է, թե ինչու է հասարակությունը հակված ստեղծել կառույցներ, որոնք սահմանափակում են անձնական ազատությունը, բայց խոստանում կայունություն: Մարդու համար ավելի հեշտ է ապրել համակարգում, որտեղ իր փոխարեն ամեն ինչ որոշվում է, քան թե մշտապես ապրել ընտրություն կատարելու տագնապի մեջ: Դոստոևսկին սրա մեջ տեսնում է ոչ թե առանձին մարդու, այլ ողջ մարդկության ողբերգությունը: Խոշոր հաշվով ծեր ինկվիզիտորը ռեալիստ է, ով տեսնում է մարդկային հոգու թուլությունը և աշխարհը կառուցում է ելնելով այդ իրողությունից: Նա պնդում է, որ մարդիկ ենթակայություն են փափագում, որ իրենք են փնտրում այնպիսի իշխանություն, որը կազատի նրանց ազատության բեռից: Ինկվիզիտորը մեղադրում է Քրիստոսին նրանում, որ գերագնահատել է մարդկությանը՝ հավատալով նրա ընտրության բեռը տանելու կարողությանը: Նա ասում է, որ մարդիկ չափազանց թույլ են այդ առաջադրանքի համար: Բայց այս մեղադրանքի մեջ թաքնված է գլխավոր հարցը: Իրո՞ք ազատությունը կարևոր չէ մեծամասնության համար, թե՞ դա այն մարտահրավերն է, եթե կուզեք, Արարչի կողմից յուրաքանչյուրիս տրված առաջադրանքը, որից ոչ ոք չի կարող հրաժարվել: Դոստոևսկին այս հարցը թողնում է անպատասխան, բայց հստակ ցույց է տալիս դրանից հրաժարվելու գինը: Նա, ով ազատության փոխարեն նախընտրում է հացը, միգուցե կուշտ է, բայց կորցնում է իրապես մարդ, «կատարյալ, ինչպես մեր Հայրն է», դառնալու հնարավորությունը:

Մեծ դասականի այս աշխատությունը մեզ բոլորիս ստիպում է մտածել, թե ի՞նչ է կոչվում լինել ազատ, և ի՞նչ գին է վճարում նա, ով փափագում է միայն կոմֆորտ և «խաղաղություն»:

«Հյուսիս–հարավ» նախագիծը և Սյունիքի մարզը

«Հյուսիս-հարավ» նախագծի իրականացումը Հայաստանի հարավով տեղաշարժն ավելի արագ և անվտանգ կդարձնի, իսկ Իրանի հետ տրանսպորտային հաղորդակցությունը՝ ավելի արդյունավետ և ռազմավարական առումով կարևոր ամբողջ երկրի համար:

Հայաստանը նախատեսում է գրեթե 3 ժամով կրճատել Իրանի սահման հասնելու ճանապարհը: Սա հնարավոր կդառնա «Հյուսիս-հարավ» նախագծի շրջանակում Սյունիքի մարզում ճանապարհների և թունելների կառուցման ավարտից հետո:

«Ղազախստան-Թուրքմենստան-Իրան-Հայաստան» լոգիստիկ ուղղու արդյունքներին նվիրված

կլոր սեղանի ժամանակ «Ճանապարհային դեպարտամենտ»-ի փոխտնօրեն Կարեն Բադալյանը Sputnik Արմենիայի հետ զրույցում պարզաբանեց, որ «Հյուսիս-հարավ» նախագծի չորրորդ մասն իրականացվում է Սյունիքի մարզում և բաժանված է երեք լոտի:

Իրանի սահմանից (Ագարակ) մինչև Քաջարան նախատեսվում է կառուցել ընդհանուր առմամբ 32 կմ ճանապարհահատված: Նախագիծը նախատեսում է 5 հանգույցի, 2 նոր թունելի և 15 նոր կամուրջների կառուցում: Այս հատվածի շինարարությունը նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2027 թվականը: Երկրորդ լոտը՝ 7.2 կմ երկարությամբ Քաջարանի նոր թունելն ու դրան հարող 4 կմ ճանապարհն է: Սա կթեթևացնի Մեղրիի լեռնանցքի (գտնվում է ծովի մակարդակից 2535 մ բարձրության վրա) ծանրաբեռնվածությունը, ինչը զգալիորեն կբարելավի ճանապարհային անվտանգության մակարդակը, ինչպես նաև թույլ կտա խուսափել անցանելիության ապահովման հետ կապված առկա դժվարություններից:

«Ադրյունքում այժմ օգտագործվող ոլորաններով ճանապարհի երկարությունը կկրճատվի 14 կմ–ով, իսկ տրանսպորտային միջոցների միջին արագությունը 50 կմ/ժ-ից կաճի մինչև 80 կմ/ժ: Ճանապարհին ծախսվող ժամանակը կկրճատվի 40 րոպեով»,– բացատրեց Բադալյանը:

Երրորդ լոտի շրջանակում նախատեսվում է Քաջարանից Սիսիան 60 կմ երկարությամբ մայրուղի կառուցել, որը ներառում է Բարգուշատի թունելը (8.6 կմ երկարությամբ), 4.7 կմ ընդհանուր երկարությամբ 27 կամուրջ և 9 թունել (12.5 կմ): Նախագծի ավարտից հետո Սիսիան-Քաջարան հատվածը կկրճատվի 54 կմ-ով, իսկ միջին արագությունը 50 կմ/ժ-ից կաճի մինչև 100 կմ/ժ: Արդյունքում այս հատվածով երթևեկության ժամանակը կկրճատվի 1.5-2 ժամով:

Այս հատվածի շինարարությունը կսկսվի 2026 թվականին և նախատեսվում է ավարտին հասցնել վեց տարվա ընթացքում:

* * *

Հյուսիս-հարավի Քաջարան-Ագարակ 32կմ երկարությամբ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներն ակտիվ ընթացքի մեջ են: Այս մասին հայտնում են «Ճանապարհային դեպարտամենտ»-ից՝ հիշեցնելով, որ 32 կմ ճանապարհահատվածում կառուցվում են 2 թունել, բազմաթիվ տրանսպորտային օբյեկտներ՝ կամուրջներ, որոնցից ամենաերկարը 720 մետր է, տրանսպորտային հանգույցներ, ուղեանցներ, փոխհատումներ, հենապատեր և այլն:

«Շինարարությունն ընթանում է լեռնային բարդ ռելիեֆի պայմաններում: Սակայն դա չի խանգարում, որպեսզի աշխատանքներն իրականացվեն մեծ տեմպերով»,- նշված է «Ճանապարհային դեպարտամենտ»-ի տարածած հաղորդագրության մեջ:

13.10.2025

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՑՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

Կոմիտաս Վարդապետը և ռուսական մշակույթը

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Հայ-ռուսական պատմամշակութային և հոգևոր առնչությունները ձևավորվելով դեռևս միջնադարում՝ անցել են դարերի փորձություն: Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը դեռ հնուց է եղել Ռուսաստանում: Մոսկվայի Կարմիր հրապարակում, Վասիլի Երանելու տաճարի համալիրի մեջ, ավելի քան հինգ դար կանգնած է Հայոց Գրիգորի եկեղեցին (Церковь Григориса епископа Великой Армении)՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով: Այն կառուցվել է Իվան Ահեղի հրովարտակով:

Հայ-ռուսական կապերն ավելի ամրապնդվեցին 19-րդ դարում, երբ 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Հայկական մշակույթն ապրեց զարգացման ու վերելքի բուռն շրջան, ստեղծվեցին հայ մշակութային և կրթական օջախներ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Մոսկվայում, Աստրախանում, Ղրիմում, Թիֆլիսում և Բաքվում: Իրենց լուսավորական գործունեությամբ առանձնանում էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Այսօր էլ Ռուսաստանի տարածքում գործում են ճարտարապետական ինքնատիպ լուծումներով աչքի ընկնող բազմաթիվ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին հայ երաժշտական մշակույթի համար ռուսական առաջադիմական արվեստի հսկայական դերն անուրանալի իրողություն է: Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում մասնագիտական կրթություն են ստացել հայազգի նշանավոր կոմպոզիտորներ Մակար Եկմալյանը (1855-1905), Ռոմանոս Մելիքյանը (1883-1935), երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանը (Վասիլի Կորգանով, 1865-1934), երաժիշտ կատարողներ Նադեժդա Պապայանը, Բեգլար Ամիրջանյանը, Հովհաննես Նալբանդյանը:

Ռուս մեծանուն կոմպոզիտոր Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի մոտ է ուսանել Ալեքսանդր Սպենդիարյանը (1871-1928), երաժշտության պատմության մեջ հայտնի է նաև Սպենդիարով-Գորկի ստեղծագործական համագործակցությունը: Այդպիսի բազում օրինակներ կան ընդհուպ մինչև 20-րդ դար:

20-րդ դարում Մոսկվայում էր զարգանում հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի տաղանդը: Մայրաքաղաքում գործող հայ արվեստի տունը կարևոր ազդեցություն ունեցավ «Հայկական հնգյակի» կոմպոզիտորների մասնագիտական կատարելագործման համար:

Հայոց հոգևոր կյանքում բացառիկ դեր և նշանակություն ունեցող մեծանուն կոմպոզիտոր՝ հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, բազմաբեղուն երաժիշտ, կոմպոզիտոր, բանահավաք, երաժշտագետ, խմբավար, երգիչ ու մանկավարժ Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության շրջանները նույնպես կապված են ռուսական մշակույթի հետ, ընդ որում՝ բազմաթիվ փաստեր առ այսօր մեր առջև դնում են բարդ ու հետաքրքիր խնդիրներ, իսկ նրա փառքի ու ողբերգության բազում էջեր պարուրված են խորհրդավորության շղարշով:

Կիսելով սեփական ժողովրդի ճակատագիրը՝ հանճարեղ գեղարվեստագետը գիտակցական կյանքն ավարտեց Հայոց մեծ եղեռնից հետո՝ մահկանացուն կնքելով օտար ափերում:

Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն է դարձել նորովի և առավել բազմակողմանի դիտարկել Կոմիտասի գիտական կենսագրության «հայտնի» փաստերը:

Խորհրդային շրջանում տարբեր շեշտադրումներով են լուսաբանվել Ռուսաստանի հետ Կոմիտասի առնչությունները: Հայտնի են հիմնականում ռուս երաժիշտներ Թոմաս Հարթմանի (1885-1956) և Միխայիլ Գնեսինի (1883-1943) արժեքավոր հուշագրությունները նրա մասին[9]:

Հայ գրող, հրապարակախոս Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956) անդրադառնալով Կոմիտասին, կոմիտասագիտության հիմնախնդիրներին՝ 1956-ին գրում էր. «...մտահոգության առարկա է դարձել Կոմիտասի՝ դեպի ռուսական երաժշտությունն ունեցած առնչությունների համար նյութ գտնելու հարցը: Ապրելով և ստեղծագործելով նախկին Ռուսաստանում, նա (Կոմիտասը – Լ. Ս.) չէր կարող վերաբերմունք և տեսակետ չունենալ դեպի ռուսական երաժշտությունը... Մենք ունենք ընդարձակ նյութ այն մասին, որ Փարիզում և Պոլսում նա սերտ հարաբերություն ուներ ռուսական երաժշտության հետ, մեծապես գնահատում էր «Հզոր հնգյակը», գրի էր առնում ռուս ժողովրդական երգերը: ...Գնեսինի հետ ծանոթությունը, Արենսկու և Տանեևի արժանավոր աշակերտ Հարթմանի հեղինակավոր կարծիքները և մասնագիտական գնահատությունները, նմանապես մեր մեծատաղանդ երաժշտի հմայքի ու գործունեության հանդեպ հայ և օտար հասարակության ցուցաբերած հիացքն ու սերը միանգամայն վկայում են նրա երաժշտության մեծ արժեքն ու նշանակությունը»:

Մեր հոդվածի շրջանակներում առաջին անգամ պատմաքաղաքական տեսանկյունից հնարավոր ամբողջությամբ մեկտեղելու և դիտարկելու ենք Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության, այսպես ասած, «ռուսական» շրջանը, ինչը, անշուշտ, նոր լույս կսփռի Կոմիտաս Վարդապետի պատմական դերի ճշմարտացի գնահատականի վրա:

Վարդապետի բանահավաքչական և գիտական աշխատանքները, մեծավ մասամբ, իրականացվել են Արևելյան Հայաստանում, որը 20-րդ դարասկզբին Ռուսական կայսրության մի մասն էր, նաև Անդրկովկասի մշակութային կենտրոններ Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, որտեղ մեկտեղված հայ և օտարազգի մտավորականները ոգեշնչվում էին ռուսական մշակույթի առաջադեմ, լուսավորական գաղափարներով: Վարդապետի ստեղծագործական գործունեությունը նաև ռուս առաջադեմ մտավորականների ուշադրության կենտրոնում էր: Նա ժամանակի ուսյալ արվեստագետներից մեկն էր, որը տիրապետում էր նաև գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուներին: Ի դեպ, Գևորգյան ճեմարանում Կոմիտասը ռուսաց լեզու սովորել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից (1864-1929), որը նկատելով Կոմիտասի՝ երաժշտության հանդեպ ունեցած բացառիկ ընդունակությունները, Ռուսաստանից բերել էր տալիս երաժշտական դասագրքեր: Հոգևոր ճեմարանում ռուս գրականություն և պատմություն է ուսանել հայտնի բանասեր, պատմաբան Ստեփան Լիսիցյանի (1865-1947) դասարանում:

Շրջելով աշխարհի տարբեր երկրներում, հստակ գիտակցելով իր ապրած բարդ ժամանակաշրջանն ու իր առաքելությունը՝ Կոմիտասը հայերի ճակատագիրը կապում էր Ռուսաց կայսրության հետ. «Չը պէտք է բաժնուենք. չը պէտք է խաբուենք Եւրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներէն. միանալու ենք և գործնական ճամբան բռնելու ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայութիւնն ամփոփել Ռուսի իշխանութեան տակ... Ես վախ չունեմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է և եթէ խելօք շարժուենք կը վաստկենք. ես այս կարծիքն ունեմ»: Վարդապետի Նամականու մեջ տեղ են գտել նաև ռուսերենով հեռագրեր ու նամակներ:

Կոմիտաս-կոմպոզիտորի գործունեության առաջին լուրջ գնահատականները տվել են ռուսական մշակութային գործիչները: Իր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» արժեքավոր հոդվածում երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը գրում է. «1919-ին Թիֆլիսում պրոֆեսոր Հարթմանի նշանավոր ելույթից հետո, որ «հայտնագործեց» (մասնավորապես «արևելահայերի» համար) Կոմիտաս-կոմպոզիտորին, թերևս ոչ ոք այլևս չփորձեց վիճարկել նրա բացառիկ դերը հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի ձևավորման մեջ»:

Վարդապետի գործի գնահատության մեջ Թ. Հարթմանի կարևոր գնահատություններին մանրամասն կանդրադառնանք մեր հաջորդ շարադրանքում: Փորձենք փաստերը դիտարկել ըստ ժամանակագրության:

Իր գիտակցական կյանքի մի զգալի հատված Կոմիտասն ապրել է Արևելահայաստանում կամ Հայաստանի ռուսահպատակ հատվածում, և ինչպես վերը նշեցինք, նրա «ծանոթությունը» ռուսական մշակույթի հետ սկսվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, շարունակվել Անդրկովկասի հայաշատ քաղաքներում, որտեղ գործում էին հայկական եկեղեցիներ, մշակութային միություններ, դպրոցներ, թատրոններ, պարբերական մամուլ: Չնայած լուսավորական հաստատությունների առատության՝ ցարական իշխանությունները վերահսկում էին Անդրկովկասի մշակութային կյանքը: Օրինակ, երբ 1906-ին Կոմիտաս Վարդապետը Գարեգին Լևոնյանի հետ մտադրվել էին Վաղարշապատում հրատարակել «Գեղարուեստ» գրական-գեղարվեստական հանդեսը, Երևանի նահանգապետից ստանում է մերժում այն պատրվակով, որ Վաղարշապատը քաղաք չէ, և Անդրկովկասի գյուղերում հանդեսներ չեն հրատարակվում: Հավելենք, որ ըստ նահանգապետի, Կոմիտասը «ռուսահպատակ» չէր և բացատրության մեջ նաև գրված էր. «Խմբագիրներից մեկը՝ Կոմիտաս Գևորգյանը, ռուսահպատակ չէ, իրավունք չունի այդ պաշտոնին հաստատվելու»:

Կոմիտաս Վարդապետը, որպես «թրքահպատակ կամ տաճկահպատակ», մշտապես գտնվում էր Էջմիածնի միաբանության «ռուսահպատակ կղերականության ուշադրության կենտրոնում: Իր հերթին, հայ առաքելական եկեղեցին ևս, որը պետականություն չունեցող հայ ժողովրդի միակ հոգևոր և կրթական օջախն էր, ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր: 1907-ին, Խրիմյան Հայրիկի մահվանից հետո, սրվեց հակահայկական քաղաքականությունը, և յուրաքանչյուր «այլախոհ» ճեմարանական հետապնդվում ու հալածվում էր: Կոմիտասի «ազատ» լուսավորական գործունեության հանդեպ կղերականության «ռուսահպատակ հատվածի հետապնդումներն ու սահմանափակումները ժամանակի ընթացքում առավել մեծ թափ ստացան: Մայր աթոռը լքեցին կամ ակտիվ գործունեությունից մեկուսացվեցին Գարեգին Լևոնյանը (1872-1947), Երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974), Գարեգին Հովսեփյանը (1867-1952), Կարապետ Տեր-Մկրտչյանը (1866-1915): 1910-ից Էջմիածինը լքեց նաև Կոմիտաս Վարդապետը:

Հայտնի է, որ 1893-ին Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո Կոմիտասը ծրագրում էր կատարելագործել իր ընդհանուր և երաժշտական գիտելիքները: 1895թ. նա երաժշտական մասնագիտական համակողմանի կրթություն ստանալու նպատակով մեկնում է Անդրկովկասի մտավորականության կենտրոն Թիֆլիս՝ դասեր առնելու հայ անվանի կոմպոզիտոր, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ղեկավար Մակար Եկմալյանի մոտ: Անտարակույս է, որ դասական հարմոնիայից բացի Եկմալյանը Կոմիտասին հնարավորինս ծանոթացնում էր ռուսական ազգային երաժշտական դպրոցի գեղարվեստական բարձր ձեռքբերումներին: 1905-ին Թիֆլիսում Կոմիտասը ձեռք է բերում և ուսումնասիրում 1891-ին Մոսկվայում հրատարակված ռուս կոմպոզիտոր, դաշնակահար Անտոն Արենսկու (1861-1906) «Краткое руководство к практическому изучению гармонии», ինչպես նաև Պետերբուրգում 1883-ին լույս տեսած ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Անդրեյ Կազբիրյուկի (1845-1885) «Руководство пркактическому изучению гармонии», ռուս կոմպոզիտոր ու խմբավար Վասիլի Օռլովի (1858-1901) «Искусство церковного пения» աշխատությունները: Հետագա տարիներին նրա սեղանի գիրքն է դառնում հայտնի կոմպոզիտոր, երաժշտահասարակական գործիչ, մանկավարժ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի (1844-1908) «Практический учебник гармонии» ձեռնարկը:

Կոմիտասը մտադրություն ուներ սովորել Պետերբուրգի կոնսերվատորիայում, ծրագրել էր հետագայում հայ ուսանողների համար Թիֆլիսում կոնսերվատորիա բացել, սակայն հանգամանքների բերումով և հայ եկեղեցական գործիչ Մաղաքիա Օրմանյանի (1841-1918) խորհրդով նա ընտրում է Գերմանիայում ուսանելը:

Ժողովրդական երգամտածողության հիմքով 19-րդ դարում բուռն ծաղկում ապրող ռուսական երաժշտությունը, ազգային կոմպոզիտորական դպրոցի իր խոշորագույն ներկայացուցիչներով, չէր կարող վրիպել հզոր ինտուիցիայով օժտված երաժիշտ և գիտնական Կոմիտասի տեսադաշտից: Կոմիտաս Վարդապետը հայ, արևելյան և եվրոպական երաժշտությանը զուգահեռ գիտականորեն ուսումնասիրում էր նաև ռուսական երաժշտական հարուստ մշակույթը, որը, անտարակույս, հայտնություն էր Եվրոպայի համար:

Կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես էր Վարդապետը Փարիզում կամ Կ. Պոլսում մասնակցում կամ էլ ունկնդրում «Ռուսաց» համերգները: Հայտնի են Վարդապետի ելույթները Փարիզի «Ռուսաց երեկույթում», որտեղ նա հանդես էր գալիս իր նոր ձայնագրած երգերով:

Շարունակելի

Ժաննա Անդրեասյանի հրամանը Գորիսում ստեղծվելիք քոլեջի տնօրենի ժ/պ նշանակելու մասին

Նախ՝ հրամանի ամբողջական տեքստը:

«Ղեկավարվելով ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1.5-րդ և 1.7-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ Արմենուհի Պողոսյանի զեկուցագիրը և Արմինե Կոլյանի անձնական դիմումը՝

Հրամայում եմ

1. Արմինե Շահումի Կոլյանին 2025 թ. հոկտեմբերի 6-ից նշանակել «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև վեց ամիս ժամկետով՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունն ու նշանակումը»:

Այդ հրամանից հարցեր են ծագում, որոնց վերաբերյալ նախարարը պետք է պարզաբանում տա, եթե, իհարկե, ինքն իրեն հարգում է:

1-ին հարց: Եթե Գորիսի պետական քոլեջն ու Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը դեռևս լուծարված չեն ու լիարժեքորեն գործում են իրենց կանոնադրությունների հիման վրա, ապա ի՞նչ հիմքով ու նպատակով է դեռևս չստեղծված 3-րդ քոլեջի տնօրենի ժ/պ նշանակվել:

Հոկտեմբերի 6-ից հետո՝ սույն խնդրի առումով՝ ո՞վ է Արմինե Կոլյանը, ո՞ր քոլեջի տնօրենի ժ/պ-ն է նա. ըստ գործող օրենքների՝ նա ոչ ոք է, որևէ իրավունք և գործառույթ չունեցող անձնավորություն:

2-րդ հարց: Հրամանում գրված է՝ «Հիմք ընդունելով մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ Արմենուհի Պողոսյանի զեկուցագիրը և...»:

Նախ՝ զեկուցագիրը ներկայացրած Արմենուհի Պողոսյանն այն անձնավորությունն է, ով զեկուցագիր ներկայացնելու օրերին նախարարությունում իրականացվող ծառայողական քննության թիրախներից էր՝ այլ պաշտոնյաների հետ մեկտեղ. թեման (ըստ մամուլի հրապարակումների) Սպիտակի պետական քոլեջում կրթաթոշակները սխալ ձևով են բաժանել ուսանողներին:

Եվ ծառայողական քննության արդյունքում պաշտոնանկ է արվել:

Ի՞նչ է ստացվում՝ մի կողմից Արմենուհի Պողոսյանին չեն վստահում և պաշտոնանկ են անում, մյուս կողմից առաջարկում գրել զեկուցագիր՝ ո՞ւմ եք ուզում նշանակել Գորիսում դեռևս չստեղծված քոլեջի տնօրենի ժ/պ:

Եվ անվստահության վիհի պռնկին հայտնված Արմենուհու կարծիքն են հիմք ընդունում:

Անհաջող այս ներկայացումը պարզելու համար նախարարը պարտավոր է հրապարակել Արմենուհու զեկուցագիրը:

3-րդ հարց: Հրամանում գրված է՝ «... հիմք ընդունելով Արմինե Կոլյանի անձնական դիմումը»:

Նախ՝ դիմումները սովորաբար անձնական են լինում, ոչ անձնական դիմում մարդը չի կարող ներկայացնել:

Նախարարը որտեղի՞ց գիտեր Արմինե Կոլյանին, միանգամից այդքան վստահություն որտեղի՞ց, որ որոշեց Գորիսի բլթբլթացող երկու քոլեջի միաձուլմամբ ստեղծվելիք նոր քոլեջի տնօրենի ժ/պ նշանակել հենց նրան՝ ոլորտին լրիվ անտեղյակ մեկին:

Պատկերացնո՞ւմ եք՝ քոլեջը դեռ չի ստեղծվել, բայց երիտասարդ մի կին հասնում է նախարարություն և խնդրում իրեն նշանակել գոյություն չունեցող քոլեջի ղեկավար:

Ժաննան, Արաքսիան, Արմենուհին չեն ասում՝ դեռ քոլեջը չի ստեղծվել...

Ընդհակառակը՝ անմիջապես դրական ընթացք են տալիս դիմումին՝ շրջանցելով երկրի գործող օրենքները:

Գիտե՞ք ինչն է նաև այս պարագայում տարակուսանք պատճառում. Գորիսի

> ***Եվ սոսկալի, ամոթալի այդ իրողությունը շրջանցելու-թաքցնելու համար ակտիվորեն շրջանառում են թեզը, թե տեղի ունեցողն ընդամենը տնօրենի աթոռի համար պայքար է՝ մոռանալով, որ տվյալ նախարարի, տվյալ փոխնախարարի ղեկավարությամբ կրթական հաստատության տնօրեն աշխատելն արդեն իսկ անեծքի պես մի բան է:***

պետական քոլեջի կոլեկտիվը բազմիցս՝ մինչև 60 ստորագրությամբ, դիմում է հղել նախարարին, բայց ոչ մի պատասխան...

Իսկ ահա անծանոթ մի տիկնոջ անձնական դիմումին անմիջապես ու հևիհև արձագանքում են:

Վերը շարադրվածը հիմք ընդունելով կարող ենք փաստել՝ նախարարի տվյալ հրամանը, ամենաբուռն ցանկության դեպքում անգամ, չի կարող համարվել լեգիտիմ անհատական իրավական ակտ:

Ուստի և՝ իրավական նշանակությամբ առ ոչինչ այդ հրամանը պետք է չեղարկել, եթե գործում ենք իրավական պետության տիրույթում:

Կա մի անսակարկելի ճշմարտություն ևս. Գորիսի երկու քոլեջի հանդեպ ԿԳՄՍ նախարարության՝ արհեստականությամբ շուլալված գործելակերպի անթաքույց մղումով է, որ հարյուրամյա երկու կրթօջախի կոլեկտիվները դիմել են ծայրահեղ քայլի՝ գործադուլի և դասադուլի...

ԿԳՄՍ նախարարությունը մինչև հիմա բացատրություն չի տվել՝ ինչ տրամաբանությամբ է կրթական ծրագրերով միմյանց հետ հեռավոր աղերս չունեցող Գորիսի երկու քոլեջը միավորում:

Եթե անգամ տեղի ունեցողի անունը փորձում են դնել օպտիմալացում, ապա դրա հետևանքով (ըստ մասնագետների հաշվարկի) ոչ ֆինանսական միջոցներ են խնայվելու, ոչ նոր աշխատատեղեր են բացվելու և ոչ էլ կրթական գործընթացն է բարելավվելու: Եվ ուրեմն՝ ի՞նչ նպատակով է կատարվում միաձուլումը:

ԿԳՄՍ նախարարը կարող էր այսքան ժամանակ այցելել Գորիս և երկու կոլեկտիվի հետ՝ իրական հիմնավորումներով, հաշվարկներով, փորձագիտական եզրակացություններով քննարկել միաձուլման նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները, քննարկել առաջացող հնարավոր խնդիրները...

Մինչդեռ... Նախարարը ժամանակ է գտնում և հանրապետության հեռավոր անկյուններից մեկում ծանոթանում կրթօջախի զուգարանի սարքավորումների որակին, բայց ժամանակ չի գտնում և պատշաճ չի համարում ծանոթանալ մոտ 600 ուսանողի, հազարից ավելի ծնողի, հարյուրից ավելի փորձառու դասախոսի մտահոգություններին...

Այդ ամենի հետևանքով է ստեղծվել-ձևավորվել տպավորություն, թե նախարարն ու իր տեղակալ Արաքսիան Սյունիքում և մասնավորապես Գորիսում հակավարչապետական տրամադրություններ են գեներացնում, ինչը նրանց հաջողվում է:

Անշուշտ, նախարարն իրավունք ունի նոր և գրագետ հրաման արձակել տնօրենի ժ/պ-ի նշանակման վերաբերյալ, բայց չպետք է մոռանա, որ երկու քոլեջի աշխատակիցներն էլ իրենց իրավունքներն ունեն՝ Սահմանադրությունից բխող...

* * *

Ի դեպ, ինչո՞ւ են Գորիսի երկու քոլեջի աշխատակիցները գործադուլի, ուսանողները՝ դասադուլի դիմել և դիմում:

Անշուշտ, չափազանց կարևոր է, թե ով է գլխավորելու ստեղծվող հաստատությունը: Եվ դա մարդիկ չեն թաքցնում: Նաև հարցականի տակ են դնում Արմինե Կոլյանի արժանավորությունը՝ մատնանշելով մի քանի ծանրակշիռ պատճառ:

Բայց ոմանք, նաև նախարարությունը, համառորեն փորձում են շրջանցել կամ թաքցնել տեղի ունեցող իրադարձությունների իրական, սկզբնական և գլխավոր պատճառն ու էությունը:

Օրը ցերեկով քանդում են Գորիսի տարածաշրջանի ամենակայացած (շեշտում ենք՝ ամենակայացած) երկու կրթական հաստատությունը՝ Գորիսի պետական քոլեջն ու Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը:

Ընդ որում՝ քանդում են ոչ թե կրթական շահերի մղումով, այլ ինչ-որ չինովնիկների անձնական հետաքրքրություններից ու շահերից ելնելով: Ընթերցեք ՀՀ կառավարության 2025 թ. ապրիլի 17-ի N 441-Ա որոշումը երկու քոլեջի միաձուլման մասին: Չեք գտնի մեկ հոդաբաշխ միտք, որով հիմնավորվում է այդ «բարեփոխման» կրթական շահը, ուսանողի շահը: Ինչ-որ հերթապահ բառեր և միայն բառեր...

Դիմելով գործադուլի և դասադուլի՝ մարդիկ փորձել ու փորձում են տեր կանգնել Գորիսի արժանապատվությանը, փորձում են պաշտպանել տարածաշրջանի համար «բրենդ» դարձած երկու ուսումնական հաստատությունը, պաշտպանել Գորիսը, որ հիմա փականքված, հաղորդակցության ուղիներից մեկուսացված, հարյուրավոր հեկտար հողատարածքներ կորցրած և սահմանապահ դարձած տարածաշրջան է:

Եվ սոսկալի, ամոթալի այդ իրողությունը շրջանցելու-թաքցնելու համար ակտիվորեն շրջանառում են թեզը, թե տեղի ունեցողն ընդամենը տնօրենի աթոռի համար պայքար է՝ մոռանալով, որ տվյալ նախարարի, տվյալ փոխնախարարի ղեկավարությամբ կրթական հաստատության տնօրեն աշխատելն արդեն իսկ անեծքի պես մի բան է:

* * *

Այդ գործընթացի առաջին իսկ օրերից հրապարակված բազմաթիվ փաստաթղթերում արտահայտվել ու արտահայտվում է տեսակետ, թե Գորիսի երկու քոլեջի միավորումը կատարվում է Սյունիքին պատվաստված երկու պաշտոնյայի պատվերով, այսինքն՝ հիմքում անձնական ու գավառական վրեժխնդրություն է և հաշվեհարդար, ուրիշ ոչինչ:

Նրանք են Բարձր դուռ գնացել՝ ուղտաբեռ բամբասանքով, ասելով նաև՝ Գորիսում իրենց լուրջ չընդունելու պատճառներից մեկը Գորիսի պետական քոլեջն է:

Գորիսում իշխող և մինչև հիմա չհերքված այդ տեսակետի համապատկերի վրա էլ երկու այդ պաշտոնյան փնտրել-փնտրել և գտել են իրենց հարմար թեկնածուն: Ոչ թե ստեղծվող քոլեջի շահերից բխող թեկնածուն, այլ իրենց քիմքին հաճո թեկնածուն...

Այդ տիկնոջը չենք ճանաչում, հեռվից գիտենք նրա նախնիներից ոմանց, և հարգանք ունենք նրանց հանդեպ՝ իբրև մեր համաքաղաքացիների:

Եվ զարմանալի է, որ տիկինը հոժարությամբ (նույնիսկ ոգևորությամբ) միացել է Գորիսի ավանդական երկու ուսումնական հաստատությունը քանդելու-վերացնելու գործընթացին՝ չունենալով տարրական փորձ միջին մասնագիտականում աշխատելու, անտեսելով փաստը, որ այնտեղ տասնամյակների հարուստ փորձ ունեցող դասախոսներ են աշխատում, չիմանալու տալով իրողությունը, որ իրեն Արաքսիայի մոտ ուղարկելուց առաջ մի քանի հոգու (երկու քոլեջից) հավաստագիր տալու և ժ/պ նշանակելու խնդրանք–առաջարկ է արվել, բայց արժանապատիվ այդ մարդիկ մերժել են կասկածելի առաջարկությունը: Նույնիսկ մոտակա շրջաններից են փորձել տնօրենի ժ/պ-ի թեկնածու հորինել–պեղել, բայց ոչ մեկը չի համաձայնվել մասնակիցը դառնալ Գորիսի երկու կրթօջախի ավերման գործընթացին:

Իսկ ահա տիկինը հաճույքով է ստանձնել ոչ բարի այդ դերակատարությունը...

* * *

Այս ամբողջ պատմության մեջ, սակայն, կարևոր և դրական մի հանգամանք կա. շատ շուտով կրթական ոլորտից դուրս են մղվելու եւ Ժաննան, եւ Արաքսիան: Բարոյական առումով արդեն իսկ լուսանցքում են այդ ամենը նախաձեռնող-պատվիրող երկու մերժվածը:

Իսկ 100-ամյա երկու քոլեջները, համոզված ենք, անպայման վերականգնվելու են՝ հարգանք ու պատկառանք վայելող իրենց անվանումներով:

Դրանում ոչ միայն մենք ենք համոզված: Պարզապես պետք է հիշել բնության քարե կանոնը՝ ամենաերկար ու մղձավանջային գիշերն անգամ ի վերջո ավարտվում է այգաբացով...

Հ.Գ. ***Կարծում ենք՝ նախարարը չպետք է մոռանա ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 115-ի 1-ին մասի պահանջը՝ «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում՝ գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ»:***

Այնուհետև՝ նախարարը Կարեն Լազարյանին ս.թ. մայիսի 2-ին (ոչ օրենքով սահմանված եղանակով ուղարկված) ծանուցման մեջ գրում է. «...Ձեր հետ կնքված 30.13.2021 թ. թիվ 13 աշխատանքային պայմանագիրը լուծվելու է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման հաջորդ օրը»:

Նախ՝ շնորհիվ նախարարի՝ առաջին անգամ իմանում ենք, որ տարին 13 ամիս ունի, բայց դա այդ նախարարության պարագայում զարմանալի չէ:

Կարևորը նման ծանուցման իրավական հիմքի բացակայությունն է...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«Կապանը կարդում է» և միանում գրքի երևանյան միջազգային փառատոնին

Հայաստանի հարավային մայրաքաղաք Կապանը հոկտեմբերի 4-ին հյուրընկալեց գրքի երևանյան միջազգային փառատոնը, որ անցկացվեց «Կարդում է Կապանը» խորագրի ներքո: Կապանի մշակույթի կենտրոնի առջևի հրապարակը տրամադրվել էր մայրաքաղաքից ժամանած գրահրատարակիչներին: Տաղավարներում ցուցադրված էր «Արմավ», «Նյումեգ», «Բուկինիստ», «Զանգակ», «ԴաՎինչի», «Անտարես», «Էդիթ Պրինտ», «Թիվ 405», «Ակտուալ արվեստ» հրատարակչությունների տպագիր արտադրանքը:

Առանձին տաղավարներով ներկայացված էին Կապանի «Սյուն» գրախանութը, «Պապոյան» հրատարակչությունը և «Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ը: Ցուցահանդեսին մասնակցում էին «Սյունյաց երկիր» թերթը և «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսը՝ հայոց մեծերին և Սյունիքին նվիրված հատուկ թողարկումներով:

Կեսօրից հետո մշակութային կենտրոնում աննախադեպ գրական մթնոլորտ էր: Նախ կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ փառատոնի բացումը: Օրվանը պատշաճող խոսքով հանդես եկավ փառատոնի տնօրեն Անի Ղազարյանը, ով, մասնավորապես, հայտնեց եռօրյա փառատոնին Երևանում մասնակցեց 40 հազար այցելու և վաճառվեց 18 հազար գիրք, շատ ավելի շատ, քան փառատոնի առաջին տարում: Նա համոզմունք հայտնեց, որ Կապանում փառատոնը ևս կանցնի ակտիվության պայմաններում:

Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը երախտագիտություն հայտնեց ընդունելության համար և կարևորեց կապանցիների շփումը երիտասարդ ստեղծագործողների հետ և մաղթեց քննարկումներ՝ բանավիճային թեժ մթնոլորտում:

«Կապանը կրթությունն արժևորող և մշակութային քաղաք է, և պատահական չէ, որ պատրաստակամություն ենք հայտնել ընդունելու փառատոնը», – ասաց Կապանի համայնքապետի առաջին տեղակալ Գոռ Թադևոսյանը և շնորհակալություն հայտնեց ԿԳՄՍ նախարարությանը, Երևանի քաղաքապետարանին և «Գրքի փառատոն» հասարակական կազմակերպությանը:

Կապանի համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Թերեզա Գալստյանը ներկայացրեց «Կապան» եռալեզու գիրք-ալբոմը, որ լույս է տեսել համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ՝ օգոստոսի 16-ին կայացած Կապան քաղաքի օրվանն ընդառաջ: Նշվեց, որ թերթելով գրքի էջերը՝ յուրաքանչյուր ոք կկարողանա տեսնել, ճանաչել և բացահայտել այսօրվա Կապանը:

Ամբողջ օրը հագեցած էր բազմաբնույթ միջոցառումներով, որ նախաձեռնել էր փառատոնը:

Երիտասարդ ստեղծագործողները՝ բանաստեղծներ, արձակագիրներ, գրականագետներ, ընթերցողների հետ շփվելու տարբեր ձևաչափեր էին ընտրել: «Պոետիկ փոթորիկ» խորագրով հանդես եկան Հասմիկ Սիմոնյանը, Անուշ Քոչարյանը, Երեմ Կարապետյանը (Եր Կար), Անի Տոնոյանը: «Ոչ մի շաբաթ առանց գրականության». ինչպե՞ս դասավանդել գրականություն, - այս խնդիրները մանրամասնեց Հայկ Համբարձումյանը: Կրտսեր ընթերցողի համար տեղի ունեցավ գրքի քննարկում «Տարբեր» ակումբի հետ՝ Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» ստեղծագործությունը: Այնուհետև գրքի շնորհանդես էր՝ Միեր Արշակյանի «Ուրիշի օրագրեր» ստեղծագործությունը, որ արժանացել է փառատոնի մրցանակին: «Զուգահեռ ընթերցումներին» մասնակցեցին Հայկ Համբարձումյանը և գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը:

Այնուհետև գրականության ընթերցումներն անցան արձակագիրներ Համլետ Առաքելյանի և Հովիկ Աֆյանի մասնակցությամբ: Իսկ վերջում ստենդափ էր՝ Արմեն Սարգսյանի, Վազգեն Օհանյանի և Տիգրան Գևորգյանի հետ:

Երեկոյան մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում փառատոնի շրջանակում հանդես եկավ «Լավ էլի» խումբը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
06.10.2025

Гуманитарная помощь из России продолжается в рамках совместной акции Российской гуманитарной миссии и АНО «Евразия»

В минувшие выходные наша команда работала в Котайкской области, в Чаренцаване – общине, традиционно принимавшей наибольшее количество вынужденных переселенцев еще с 1990-х годов. Местные жители всегда готовы протянуть руку помощи и поделиться последним, однако ресурсов катастрофически не хватает, особенно когда речь идет о многодетных семьях, матерях и отцах-одиночках, пожилых и больных людях.

Так, за два дня в пункт выдачи обратились 200 семей вынужденных переселенцев из Нагорного Карабаха, каждая из которых получила по большому универсальному набору с гигиеническими средствами и запасом продуктов, которого точно хватит на ближайшее время. Благодарим каждого, кто не остаётся безучастным к судьбам людей, столкнувшихся с трудностями, и продолжаем доставлять помощь туда, где она особенно необходима. Акция реализуется в рамках проекта #РоссияСВами при поддержке Россотрудничества.

РУССКАЯ ГУМАНИТАРНАЯ МИССИЯ
13.10.2025

Անսահման ուրախության պահ

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ
gusanashot.com կայքի հիմնադիր և խմբագիր

Հանրային հեռուստատեսության առաջին ալիքի հանրահայտ «Երգ երգոց» ծրագիրը հոկտեմբերի 18-ին ներկայացրեց Գուսան Աշոտի մինչ այդ չգործիքավորված և չկատարված 12 երգ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դա մի շատ սովորական, հերթական հաղորդում էր…

Դեռևս 12 տարի առաջ, երբ ձեռնարկել էինք ստեղծել Գուսան Աշոտի պաշտոնական կայքը https://gusanashot.com/, ինձ ամենից շատ զարմացրել և վշտացրել էր Մեծ Գուսանի ստեղծագործությունների կատարման վիճակագրությունը: Գուսան Աշոտի ստեղծած, նոտագրված և տպագրված ավելի քան 500 երգից բոլոր ժամանակներում կատարվել են ընդամենը 86-ը: Դրանք հիմնականում առաջին՝ «Գուսանի սերը» և մասամբ էլ երկրորդ՝ «Սիրո կրակներ» երգարաններում զետեղված երգերն են: Երրորդ՝ «Ծովաստղիկս» երգարանի 126 երգից կատարվել է միայն 6-ը, իսկ «Հավերժություն»-ից՝ ոչ մի երգ: Եվս 94 երգ, որ կան բանաստեղծությունների ժողովածուներում, տեղ չեն գտել երգարաններում: Ստացվում է, որ բոլոր ժամանակներում կատարվել են մինչև 60-ական թվականներին գրված երգերը, որ անվանի երգահանի կյանքի վերջին 30 տարվա ստեղծագործություններից գրեթե ոչինչ չի կատարվել:

Անցած դարակեսին Գուսան Աշոտի երգերի այսպիսի ակտիվ կատարումների համար մենք պարտական ենք հայ երգի մեծ նվիրյալներ՝ Հայաստանի երգի և պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավար Թաթուլ Ալթունյանին, Հայաստանի ազգային ռադիոյի ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար Արամ Մերանգուլյանին, Սայաթ-Նովա աշուղական անսամբլի գեղարվեստական ղեկավար Վաղարշակ Սահակյանին: Ավելի ուշ այդ ավանդույթները շարունակել են Ստեփան Ջրբաշյանը, Արմեն Մանդակունյանը, Մանվել Բեգլարյանը, Էմմա Ծատուրյանը, Թովմաս Պողոսյանը: Առանձնապես պետք է ընդգծել Հովհաննես Բադալյանի, Շարա Տալյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի անունները, ովքեր նոտագրելու հետ մեկտեղ դարձել են Աշոտի երգերի առաջին կատարողները: Եվ վերջապես, անվանի երգիչներ Օֆելյա Համբաձումյանի, Նորայր Մնացականյանի, Ֆլորա Մարտիրոսյանի, Ռուբեն Մաթևոսյանի, Վալյա Սամվելյանի, Բելլա Դարբինյանի, Ռաֆֆի Հովհաննիսյանի, Լևոն Քաթրջյանի, Ռիմա Սարիբեկյանի, Սուսաննա Սաֆարյանի, Պապին Պողոսյանի և էլի մի խումբ երգիչների շնորհիվ է, որ Գուսան Աշոտի նոր երգերը ժամանակին պատշաճ կատարումներ են ունեցել:

Իսկ հետո՞… Տարբեր առիթներով բազմիցս բարձրաձայնվել է, որ անհրաժեշտ է պայմաններ ստեղծել բացելու Գուսան Աշոտի չկատարված երգերի գանձարանը, որտեղ թաքնված երգերը նոր որակներով ու երանգներով կներկայացնեն մեծ երգահանի արվեստը:

Այսօր բացառիկ ուրախության պահ է: Իբրև «մեր ժամանակի հերոս» կարելի է դիտել անվանի երաժիշտ, Հայաստանի հանրապետության վաստակավոր արտիստ, «Նարեկացի» նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արտեմ Խաչատուրին, ով արձագանքելով Գուսան Աշոտի պաշտոնական կայքը վարողների խնդրանքին, անհատույց մշակել, գործիքավորել, նվագախմբի ու առաջին ալիքի երգի մրցույթում ընտրյալներ ճանաչված երգիչների կատարմամբ ներկայացրել է հնչած 12 երգը:12 նոր, մինչ այդ չկատարված երգի պրոֆեսիոնալ կատարումներով հարստացել է Գուսանի երգարվեստի գանձարանը:

Գուսան Աշոտի արվեստի երկրպագուների, ողջ սյունեցիների անունից շնորհակալության խոսք եմ ուղղում «Երգ երգոց» ծրագրի ղեկավարությանը, երգիչներին, «Նարեկացի» նվագախմբի ղեկավարին ու բոլոր երաժիշտներին՝ այս հայրենանվեր գործը ձեռնարկելու և իրականացնելու համար: Մենք էլի սպասելիքներ ունենք…

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 Թ.

Տոնակատարություն Ագարակ քաղաքի հիմնադրման 76-ամյակի կապակցությամբ

«Տաթևեր» ճոպանուղին կրկին առաջադրվել է World Travel Awards մրցանակաբաշխությանը

Հայկական «Տաթևեր» ճոպանուղին նշում է իր 15-ամյակը և կրկին պայքարում է World Travel Awards 2025 մրցանակաբաշխության վարկածով աշխարհի լավագույն ճոպանուղու կոչման համար:

Այն երեք անգամ հաղթել է այս անվանակարգում՝ 2021, 2023 և 2024 թվականներին:

Այս անգամ «Տաթևերը» մրցում է Բոլիվիայի, Բրազիլիայի, Վիետնամի, Կանադայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ-ի և ՀԱՀ-ի ճոպանուղիների հետ: Քվեարկությունը կտևի մինչև 2025 թվականի հոկտեմբերի 26-ը:

2010 թվականին բացվելուց հետո «Տաթևերը» գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում որպես «աշխարհի ամենաերկար անկանգառ հետադարձելի ճոպանուղին» (longest non-stop double-track cable car): Ճոպանուղին գտնվում է Սյունիքի մարզում՝ Երևանից 170 կիլոմետր հեռավորության վրա:

Ռուբեն Վարդանյանի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (Initiatives for Development of Armenia, IDeA) հիմնադրամի «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում է 2010 թվականին իրականացվել աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղու՝ «Տաթևեր»-ի կառուցումը, որը տանում է դեպի Տաթևի վանք:

YERKIR.AM

ԿՈՐԵԼ Է Կապանի բժշկական ուսումնարանի 2004 թ. շրջանավարտ Սաթինե Սուրենի Կարապետյանի դիպլոմը՝ AK N 031609, գրանցման N 3935: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Վաչագան Կոլյայի Խաչատրյանին պատկանող՝ 1986 թ.արտադրության, կարմիր գույնի, շարժիչի մակնիշը՝ 392876, հացահատիկահավաք կոմբայնի պետհամարանիշը՝ 7156 SL: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է «Սերպանտինա» ՍՊ ընկերությանը պատկանող՝ 1988 թ. արտադրության, ԴՋ-1431 մակնիշի, դեղին գույնի, շարժիչը՝ 079012, Ա / Գրեյդերի պետհամարանիշը՝ 3956 Ամ: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է «Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այժմ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ) 2010 թ. շրջանավարտ (հեռակա ուսուցմամբ) Աստղիկ Գավրուշայի Հովհաննիսյանի դիպլոմը՝ AK N 090484, գրանցման N 1713: Համարել անվավեր:

Փառատոնն ավանդական է դառնում

Հոկտեմբերի 14-ին ազդագիրը Կապանի արվեստի պետական քոլեջում հրավիրում էր երգեհոնային համերգի՝ Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության 3-րդ միջազգային փառատոնի շրջանակում:

Վահագն Ստամբոլցյանի ջանքերով տարիներ առաջ Հայաստանի տարբեր քաղաքներում, այդ թվում և Կապանում հայտնվեցին երգեհոններ՝ ընդսմին ձևավորելով երգեհոնային երաժշտության ստամբոլցյանական դպրոցը:

2022 թվականին կամերային երաժշտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ և Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանում կայացավ երգեհոնային երաժշտության առաջին միջազգային փառատոնը, որն ըստ ամենայնի ավանդական է դառնում: Մեկուկես ժամ հանդիսատեսը վայելեց աստվածային երաժշտություն, իսկ մինչ այդ կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրենի տեղակալ, փառատոնի գեղարվեստական ղեկավար և հիմնադիր Արմեն Սուքիասյանը, ողջունելով ներկաներին, հայտնեց, որ փառատոնն անցկացվում է Երևանում, Չարենցավանում և Կապանում, որտեղ կան երգեհոններ և որոնց մասնակցում են հանրապետության երգեհոնային երաժշտության լավագույն կատարողները:

Համերգային ծրագրում հանդես եկան Վահագն Ստամբոլցյանի սաներ Մարինա Նահապետյանը, Հարություն Թագվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Արմեն Աղաջանյանը:

Առանձին կատարումների ժամանակ նրանց միացան Հասմիկ Մարտիրոսյանը (սոպրանո) և Աշոտ Խաչատրյանը (թավջութակ): Հնչեցին Բուքստեհուդեի, Բախի, Կոմիտասի, Ալ. Հարությունյանի ստեղծագործություններից: Համերգի ավարտին Արմեն Աղաջանյանը հնչեցրեց Բախի «Տոկատա և ֆուգա ռե մինոր» ստեղծագործությունը, ամբողջացնելով համերգից ստացած հանդիսատեսի տպավորությունը:

Ամենավերջում Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը, երախտագիտություն հայտնելով համերգի կազմակերպիչներին, երաժիշտներին և հանդիսատեսներին, հայտնեց, որ հաջորդ տարի լրանում է Վահագն Ստամբոլցյանի 95-ամյակը և համոզմունք հայտնեց, որ փառատոնն առավել շուքով կանցկացվի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: ® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 22.10.2025թ.: